

ՄԱՐՏԻ 1902

Պր. Վերջինի համար 12 ժր.
 Տարեկան 6 " "
 Ա. Տարեկան 15 " "
 Վեցամսեայ 8 " "
 Մեծիկայի համար 3 " "
 Տարեկան 1.50 " "
 Վեցամսեայ 0.75 " "
 Կլիպիկի վճարելի

Մանուգլան սոդրատա-
 ղին երեսին համար 40 ս.
 իսկ վերջին երեսի հա-
 մար 20 սանիթի է. երկեհ
 աղեղի անգլաններու համար
 20 օր փոքր կրկնայ:

ՇԱՐՋՈՒՄ

Շարժումը իր անունը կրկին
 իր անունը կրկին կրկին
 —
 Ред. и изд. «ШАРЖУМ»
 «Шаржум»
 Редакция du journal
 «Charjoun»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԶՈՐԻՔՇԱՐՋՈՒՄԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԻՐԸ

(20 ՄԱՆԹԻՄ)
 Պր. Վերջինի համար 40 ս.
 = 15 ՄԱՆԹԻՄ =

Վառնայի համար 40 սանիթի

ՇԱՐՋՈՒՄԻ ԼՈՐ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՎ Է ԵՄՆԻԻՆ ԿՆԱՐԻ

ՅՈՒՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր բաժանորդներն մէկ մա-
 սը չը նայած մեր յայտարարու-
 թեանց, իրենց պարտքը չը
 ճանչացան. ու դեռ կը շարու-
 նակեն թերթ ստանալ:

Այդ անպարտաճանաչ մու-
 ցորդներուն ժամանակ կուտանք
 մինչև փետրուար քսան. ու
 այնուհետև պիտի յայտարարենք
 անունները. իսկ Պուլկարիոյ մէջ
 չըլծարող բաժանորդներն օ-
 րէնքի դիմելով պիտի գտնենք:

Շարժում միշտ զրկուած է ով
 ուղած է. ոչ ոքի առանց ուղե-
 լու, մանաւանդ նոր խմբագրու-
 թեան միջոցին, թերթ չէ զրկ-
 ուած. եւ այդ ուղեւորուն բո-
 լոր նամակները պահուած են:

Բաժանորդները թող հասկնան
 որ խմբագրութիւնս թուղթի,
 մարքայի, սպարանի, գրաշարի
 ստակ կը վճարէ, և երբ իր բա-
 ժանորդները իրենց չնչին
 պարտքը չեն վճարեր, խմբագ-
 րութիւնը ահագին պարտքերու
 տակ կ'իյնայ, թէ ինք կը փրա-
 ուի, և թէ իրեն հետ գրամի
 գործ ունեցողները:

ՀԱՅԻՆՏԻՈՒԹԻՒՆԸ

Մեր երկու աշխատակիցները
 թաղականութիւնների հաշե-
 տութեան հարցը բարձրացրին.
 մենք էլ աւելորդ չենք համա-
 րում մի երկու խօսք ասել այդ
 մասին:

Կովկասում էլ, տասնհինգ տա-
 րի առաջ, մեր եկեղեցիների
 անտեսական բաժինը կառավա-
 րողները, որոնք երէցփոխեր են
 կոչվում, սովոր չէին հաշիւ տալ.
 հաշեւտութիւնը մի տեսակ ան-
 պատուութիւն էին համարում և
 զէպի իրենց անվստահութեան
 նշան:

Կովկասի մամուլը այդ հին և
 աղաքական սովորութեան բազ-
 մակողմանի փաստակարութիւնը

ըմբռնելով իսկոյն մատը դրեց
 այդ փթած վէրքի վրա: Ու շատ
 շանցաւ, հասարակութիւնը ան-
 ցաւ մամուլի կողմը և հաշիւ պա-
 հանջեց երէցփոխներից. գտնվե-
 ցին մի քանի խելքը պլխին ե-
 րեցփոխներ, որ ըմբռնեցին այդ
 պահանջի իրաւացի լինելը և իս-
 կոյն սկսեցին մանրամասն հա-
 շիւներ ներկայացնել:

Այսօր հաշեւտութեան սովո-
 րութիւնը գրեթէ կովկասում
 ընդհանրացած է. ընդդիմացող
 երեսփոխանները վերջի վերջի
 պարտաւորվում են զիջանիլ և
 հաշիւ տալ:

Տաճկաստանում թաղականու-
 թիւնների վրա հսկում են ազ-
 գային բարձրագոյն իշխանու-
 թիւնները. ուրեմն թաղական
 խորհուրդների հաշիւները ազ-
 գային կոնտրոլի տակ են:

Բուլղարիայի և Ռումանիոյ
 ազգային իշխանութիւնները
 կոնտրոլից բոլորովին ազատ են.
 նրանք ոչ ոքի հաշիւ չեն տալիս.
 Ժողովուրդը տեղեկութիւն չունի
 իր ազգային ելեւմուտքի մասին:

Ռումանիայի մէջ հարուստ ե-
 կեղեցիներ կան, բայց այդ եկե-
 ղեցիների եկամուտներով կառա-
 վարվող դպրոցներ չը կան. ազ-
 գային եկամուտները շանուգիլի
 բաժին են լինում, և հար-
 ցնող փնտռող չը կայ:

Ես լսել եմ որ Ռուստուկի ե-
 կեղեցին շատ կարածքներ է ու-
 նեցել և դեռ ունի, բայց դպրոց-
 ները միշտ նեղ վիճակի մէջ են
 եղել, որովհետեւ այդ կարած-
 ները անկոնտրոլ և անշնորհք
 կերպով են կառավարվել:

Բաւական է որչափ մեր ազ-
 գային հիմնարկութիւնների ե-
 լեւմուտքը աղաքականորէն կա-
 ռավարվեց ու խնամիական տրա-
 մադրութիւններով շահագործ-
 վեց. Ժամանակ է այդ թրքական
 վարչական ձեւին վերջ տալու:

տեղական ազգային գործերի մէջ.
 ու շատ օգտակար բարենորոգում:
 Մեզ համար ցանկալի էր որ
 վարնայի թաղական խորհուրդը
 առաջին քայլը անէր:

ՎԱՐՔՈ

ԴԵՍԻՑ ԴԵՆԻՑ

Ճարտնի և Անգլիոյ դաշնակ-
 ցութիւնը օրուան ամենէն սաք
 խնդիրն է. Այժմ Եւրոպոյ ամ
 բող մամուլը, դիւանագէտները
 առող են զբաղած ու զանա-
 զան գուշակութիւններ կընեն և
 բացատրութիւններ կուտան:
 Կարծիքներ կը այտնուին որ
 Ամերիկան ալ, եթէ դաշնակ-
 ցած չէ այդ երկու զօրեղ պե-
 տութիւններուն, գոնէ շատ հա-
 մակիր է: Անգլիոյ հակառակորդ-
 ները կաշխատին նապեցնել այդ
 խոշոր իրողութեան նշանակու-
 թիւնը, իսկ Ճարտնացիք և Չի-
 նացիք շատ գոհ են: Գուշակու-
 թիւնները մէկ կողմ թողունք.
 այդ գ. շնակցութեան գրական և
 անուրանալի կողմը ան է, որ
 Ռուսիա ալ եւս չը պիտի կրնայ
 Չինաստանի մէջ մեծ գեր մը
 խաղալ. և Անգլիա ապահով է
 որ ծայրագոյն արեւելքին մէջ
 խաղալութիւնը երկարատեւ պի-
 տի ըլլալ:

Իայց, ինչպէս կերբեւի, Անգլիա
 Ռուսին կ'ընդհանրական ախորժակին
 սահման մը դնելու տրամադիր է
 և մօտիկ արեւելքին մէջ:

Չը գիտեմ մեր ընթերցողնե-
 րը ուշադրութիւն դարձուցին
 Լօրտ Բարագորնի երեսփոխանա-
 կան ժողովին մէջ արտասանած
 խօսքին այս պարբերութեան
 վրայ, թէ Անգլիա պատրաստ է
 դաշնակցիլ նաեւ Պարսկաստանի
 համար, ու և է պետութեան մը
 հետ:

Արդեօք աս Անգլիոյ կողմէն
 յայտարարութիւն մը չէ՞ Ռուսիոյ
 ուղղուած թէ՞ Պարսկաստանի
 վերաբերմամբ ալ անոյն օրինը
 պիտի խաղանք զլլաւոցո:

Թրիէսթի մէջ գործատուները
 ահագին խռովութիւններ ըրե-
 ր են. քաղաքը պաշարման վիճակի
 մէջ կը գտնուի. նաեւ ըր ճամ-
 բայ չեն ելած. լրագիրները
 չեն հրատարակուած. կառավա-
 րութիւնը ստիպուել է միջոցներ
 ձեռք տունել որ գործատուները
 որոշ վիճակները ընեն. քա-
 երեւոյթի յաղթանակը գործա-
 տուները պիտի տանին, յաղթող
 ները գործատուները պիտի ըլ-
 լան:

Գործաւորական մեծ խռովու-
 թիւններ կան նաեւ Պրիւսիայի.
 Պէլճիքայի մայրաքաղաքին մէջ.
 ցոյցերը տեղի կուտնան ընդ-
 հանուր ձայնատուութեան համար.
 որուն հակառակ է կղերական կու-
 սակցութիւնը: Պէլճիքայի գոր-
 ծաւորները իրենց խորխառութիւ-
 նով և յանգուցն քայլերով միշտ
 յաջողած են կառավարութեան
 իրենց բան մը փրցնել — հաւանա-
 կան է որ այս անգամ ալ յաջողին
 և փափաքելի է որ յաջողին:

ԿԵՏ

ՌՈՒՍԻԱ ԱՊՈՍՏՈՆԱՍՏ ՀԱՅ ԳԱՂ ԹԱԿԱՆՆԵՐՈՒ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Արտասանմանի հոյ թերթերը հրա-
 տարակցին որ սուս կառավարու-
 թիւնը որոշած է եղիւր Ռուսիա ան-
 պատանած հայ դաղթականներու
 հարցը լուծել, անտնցէ Ռուսիա
 մնալ ուղղուելու աստիպարակ ըն-
 դունելով և մտցեալներուն ալ խոս-
 տանալով ճանապարհի դիւրութիւն-
 ներ, եթէ ուզեն գողթել օտար
 աշխարհներ, կամ վերադառնալ ի-
 րենց հայրենիք:

Գաղափար մը կազմելու համար այդ
 հարցի ոլուծման, մասին, հոս կըն-
 դօրինակեմ Ռուսիա գտնուող բնի-
 կամ մը ստացածս նամակէն այդ
 հարցին վերաբերող տողերը:

... ուս կա, սերական բաժնարանին
 հրամօնը յայտարարուեցաւ Կ... քա-
 ղաքին մէջ գտնուող հոյ գողթա-
 կաններուն, հրամանը տրոհէ գոր-
 ծադրուի սկսած է սմբողջ Գողթա-
 մէջ: Այդ հրամանը կը բացատրէ
 կայսրի սողորմածութիւնը հոյ գաղ-
 թականներու համար. — ամեն մարդ տ-

զատ է ուր որ ուզէ հոն բնակի . Եւրոպայ և Ամերիկայ երթացողներուն մինչև սահմանազուրկ կէս ճանապարհ . Եւ Ծածկաստան երթալ ուզողներուն ամբողջ ճանապարհաժախ կը խոստանայ վճարել ուսուկաւաւարութիւնը : Հպատակ գրութիւն ուզողը նոյնպէս կրնայ ուսուկաւաւարութիւնը ու հպատակ գրութիւններէն աւանդ որ հարմար են, այսօրուանէ զինուորական ծառայութեան պիտի կոչուին, և հպատակ գրութիւններէն աւանդ որ հարմար են, այսօրուանէ զինուորական ծառայութեան պիտի կոչուին, և հպատակ գրութիւններէն աւանդ որ հարմար են, այսօրուանէ զինուորական ծառայութեան պիտի կոչուին :

Անգլիացիներ և ուրիշ երուպացիներ հոս տեղեր եկած կըսեն թէ իրենց կառավարութիւններէն զրկուած են Հայերն օգնելու համար անոնց ճանապարհաժախը վճարելով կրկնէն տանիլ Ամերիկայի այլ և այլ կողմեր . Գանատա, նոր Գայիտոնեա, կանոնաւոր որ կը պատրաստուին Գանատա երթալ : Անգլիացիներու խորհրդով, որոնց, կրտսեր թէ պիտի աջակցի անգլիական կառավարութիւնը . կան որ այսօրուանէ ուսուկաւաւարութիւնը կը գրուին և մեծ մաս մը կայ որ թուրքիա վերադառնալ կը փափաքի : Մէկ քանի խումբեր, ընտանիքներով այդէն ճամբայ կ'ընեն զէպի թուրքիա, վերջերս տեղեկութիւն ստացանք որ իրենցմէ խումբ մը Ալաշկերտի Զ. գիւղը գետ չը հասած ջրաղբ խմելու կը հանգրայի և կը

կողպտուի անոնցմէ, կողպտուէն յետոյ, աւազակները զանոնք, իրրեւ փախստականներու ձերբակալելով կը տանին Ալաշկերտի բերդը և թուրք կառավարութեան կը յանձնեն . ուր մարդ, կին և երեխայ շարքով մը բանտ մնալէ յետոյ կ'իջևր և երեխաները կազատուին իսկ մարդիկը բանտին մէջ տանջանքներու կենթարկուին . իրենցմէ մէկ երկուքը մեռած են յանախն մէջ, մյուսները կարին պիտի զրկուին եղբր . բնտնի ազատուած կ'ենթարկեն երեքը յաջողեցան վերադառնալ, մարդ կը սոսկայ լսելով անոնց պատմածները Մուշի, Բուլաղի, Բաղլի, Բաղլի, Կիւզալաէրէի մէջ տիրող դրութեան մասին որ լատ և այդ կողմերէն փախողներէն : Գիւղեր ստաններ դատարկուելու են ընկերներէ, 40 անոնց զիւղի մէջ հազուա ասու-քան տուն մնացեր է, քաղաքներու հայտնակ թաղերու տունները մեծամասնութեամբ դատարկուած են և սարսուղներու կենթարկուած են յաջողութեամբ յուսահատական է, ասոր հետ ինչ որ աւելի տխուր է, կառավարութեան տուած զրկանքն է : Թուրք կառավարութիւնը հայրենիք մնացողներէ կը պահանջէ զաղթողներու տուրքերը ատոր համար ամեն զրկանքի, ամեն տանջանքի կենթարկուին Հայերը, թուրք զինուորները սորբ հաւաքելու համար նոյն իսկ էրիկ ու կին մարդոց հագուստները կը հանեն, կը ծախեն . տուրքը գանձուած համար, ինչ որ միտիտանք մըն է այս յուսահատ ու տխուր կացութեան մէջ հայ յեղափոխականներու երեւան գալն է . Անգրանիկ

քաղաքործութիւնը խախտուի ինչ է եղեր բոլոր տառապող Հայերուն . Եւ հոս արդէն երիտասարդներ կողեւորին Անգրանիկի օրինակին հետեւելու : Եւ չը գիտեմ ի՞նչ բնույթ, բնույթի ու զաւակներու հետ ուր երթալու չիմ կրնար որոշել, Հայրենիքէն հետեւ Թուրքիա կամ այլուր գաղթելը ծանր կուգայ ինծի, չեմ սիրեր ու չեմ ուզեր Թուրքիոյ հպատակ դառնալ : Ինչ բնույթի չեմք գլխեր, մտադիր ենք ազիրապար մը ստորագրել Զարին խնդրելով Թուրքիոյ համար բարեկարգութիւն մը և մենք զաղթականներս թուրքիա վերադառնանք . պիտի յայտնենք աղիւսագրի մէջ թէ մենք պիտի սիրով ընդունենք ուսուկաւաւարութիւնը ըլլալ բայց որովհետեւ ունինք թուրքիոյ մէջ կալուածներ և հողեր, որոնցմէ պիտի զրկուինք ուսուկաւաւարութիւնը ըլլալով, պիտի խնդրենք իր ողորմածութեան իր բարձրագոյն աշակցութիւնը մեր գաղթականներու թուրքիա վերադառնալուն : չենք գիտեր թէ որքան պիտի յաջողիք . . . Երկրէն ելէ նորութիւններ տեղեկանամ և մեր կացութեան ի՞նչ վայտնան ունենալուն մասին պիտի գեմ նորէն :

գիտնալով որ հոն իրենց համար կուտան արեւոյթ կարմրած մահը, Թուրքիան ու անգրեթ միւսկաւաւար խողխողիչ սուրբ :

Չիտու

ԴԵՊՈՒՆԸ

Բ.

Գոհ ապրելու համար, ինչպէս ըսի, բարեկամս խորհոյ զ ատուած էր կամ անձնասպան ըլլամ . կամ գաղափարական գործի մը ծառայեմ : Ըսի նաեւ որ ոչ մէկ զոհողութեան ընդունակ չեմ . ուրեմն և գաղափարական գործի մը չեմ կրնար ծառայել . չեմ ալ կրնար իմ պատճէն անպէտք արարածներուն պէս կեղծել : Բայց պէտք է ճար մը գտնալ . ոչ կրնամ ապրել և ոչ ալ կ'ընեմ մասնիկ հապա ի՞նչ ընեմ : Այս ծանր մտտութեան մէջ լի . երբ նոյն խորհրդատու բախկամս հանգրայեցայ և խորհուրդ հարցուցի :

Ան ինծի հետեւեալ պատասխանը տուաւ .

— Հիմա ճարը գտայ . միտքիս կան եղիր :

— Ի՞նչ կես, պատասխանեցի ես . յեղափոխական կուսակցութիւնները կը ջանան միանալ . իսկ ես յեղափոխական չեմ . և ոչ ալ կրնամ ըլլալ :

— Իմ խօսքս, պատասխանեց բարեկամս, միտքիս փափաքող յեղափոխական կուսակցութիւններու մասին չէ : Ուրիշ միտքեանականներ ալ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՃԱՍՎԱՆԱԼԻՆ

Մ.Ս. 111
Գ.ՈՒՆ Ա.

Տիրաւոր, որի մօտ վահէն և Զարուհին ընթրիքի էին հրաւիրուած, սուսուցչի պաշտօն էր վարում Դարեւ-ժի հայ դպրոցի երկու մէկում . բայց նա մի ուրիշ, աւելի կարեւոր պաշտօն ունէր Դարեւժում . Հայ Յեղափոխական կազմակերպութեան ներկայացուցիչ էր . ու վարիչ Ատրպա-տական կեդրոնական Կոմիտէի, որը մօտիկ կայեր ունէր Տաճկահայաստանի մէջ գտնուած յեղափոխական մարմինների հետ : Դարեւժը, իր շրջակայ քաղաքներով պատասխարան էր Կովկասից և Տաճկաստանից եկած յեղափոխական ջոկերի, որոնք ամիսը մի քանի տնպատ, զանազան ծանր յանձնարարութիւններով երկիր էին գնում և կալիս : Տիրաւոր մեծ համակրութիւն էր վայելում թէ պարսիկների և թէ հայերի մէջ, որովհետեւ նա երկաթէ ձեռքերով վարում էր այն յեղափոխական անհամբեր ու անսահմ ժխորը, որը ամէն ինչ յանձն առած, զընդեր զրպանը գրած որոշած էր իր ամբողջ կատաղութեան թափը թուրքի գլխին թափել, իսկ պարագ ժամանակ կարող էր անձնատուր լինել այնպիսի յիմարութիւններին, որին միայն ընդունակ է գոհ-հիկ ապստամբը :

Աշխարհի ամեն անկիւնից Հայ

Յեղափոխական Ֆիդիքական ուժի ներկայացուցիչները լցվել էին այդտեղ ու գործ էին պահանջում, կամ ապրուստ :

Եւ Տիրաւոր պարտաւոր էր դրանց այնպէս վարել, որ գործի ժամանակ գործեն, իսկ պարագ ժամանակ իրենց աշխատանքով ապրեն :

Պակաս չէին և այն սենակ տիպ որոնք մի փոքր զօրք կատարելուց յետոյ, աներեսանում, լրբանում և պահանջում են իրենց ապրուստը, յայտարարելով որ իրենք զոհողութիւններ են արած, ուրեմն ազգը կամ կօմիտէն պէտք է նրանց պահի . ծրխախտի, սուրճի, թէյի, հացի գինստի գրամը սայ :

Ու Տիրաւոր, որ գիտէր եւ մահուան դիմագրաւել թշնամու դէմ դուրս գալով կարողանում էր եւ այդ տեսակներին սանձադրել . ազնիւները Տիրաւորին յարկում էին, իսկ լրբերը սարսափում . որովհետեւ համոզուել էին թէ նա ընդունակ է անսխալիստ պատժի ենթարկել . . .

Վահէն եկել էր լքր Տիրաւորի օգնական ընկեր :

Երբ Վահէն և Զարուհին եկան Տիրաւորի բնակարանը, արդէն տան տիրոջ բնակարանը լցված էր հիւրերի բով : Հիւրերը կազմում էին մի քանի ուսուցիչներ, ամենքն էլ կովկասցի . մի երկու զինագործ, վանցի և Ծառախիցի զինակիր խմբապետներ, իրենց տարազներով, երեք վարժուհիներ, մի քանի Դարեւժցի երիտասարդներ :

20-25 հոգուց բաղկացած այդ խումբը մի փունջ էր կազմում ամբողջ հայրենիքի այն սարքի, որ որոշել էր կուսով եւ արդեամբ հայրենիք փրկել :

Վահէն ու Զարուհին ներս մտան .

Տիրաւոր իր կնոջ հետ դիմաւորեց հիւրերին եւ ներս հրամցնելով ասեց ներկաներին .

— Ընկերներ, ձեզնից մի քանիսը արդէն ճանաչում են Վահէին . բայց ես հիմա ամենքիդ էլ ներկայացնում եմ մեր նոր եկած ընկեր Վահէին և իր նշա անը օրիորդ Զարուհին : Վահէն շուտով կը գնայ զէպի վան եւ Ծառախ, իսկ օրիորդ մեզ մօտ պէտք է մնայ . այսօր մենք հաւաքվել ենք իմ տան մէջ, թէ մեր երկու ընկերների քալատան համար ուրախանալու . թէ Վահէին բարի յաջողութիւն մաղթելու իր ատույն փորձի մէջ :

— Ուրեմն նստենք սղերք ջան, ու զանալով իր կնոջ, տիկին Սառային, ասեց .

Ասա թէյի պատրաստութիւն տեսնեն :

Ծառախիցի և Վանցի զինակիրները սկսեցին յաճախորդի աչքով տնողել Վահէին . հասկանալով որ Վահէն իրենց հետ պէտք է գնայ :

Մի քանի վայրկեան լուռութեան տիրեց . Վահէին և Զարուհին չը ճանաչողները նրանց զիտելով էին զբաղված :

Տիրաւոր լուռութիւնը խզեց—սեւելով .

— Մենք խօսում էինք թէ պարսից կառավարութիւնը մենք ինչ կարող է մեր այստեղ ներկայ գտնվելուն հաշտ աչքով նայել : Ինձ թվում է որ Հայերը, կամ յեղափոխական տարրը աւստեպ որքան զօրւուր լինեն և որքան գիտենան իրենց լաւ պահել, Պարսիկները միշտ հաշտ պէտք է նային մեզ վրայ : Պարսիկները արդէն համոզված են որ մենք իրենց թշնամի չենք . ապագայում էլ թշնամի չինք ինչու . որովհետեւ, մեր երկրի շատ չնչին մասն է գտնվում նրանց ձեռքի սակ : Համոզված

են նաեւ որ ազատ Հայաստանը Պարսկաստանի բարեկամ պէտք է լինի իսկ թուրքացած պարսիկ պետութեան համար, որ վտխուռ է թէ թուրքիայից եւ թէ Թուրքիայից ազատ Հայաստանի բարեկամութիւնը մեծ նշանակութիւն ունի :

Պարսկաստանը հայերի միջոցաւ կարող է յատկապէս միջոցաւ միակ դրացի ընդունակ ժողովուրդը պէտք է լինի, որից նա ճնշվելու վտիւր չը պէտք է ունենայ :

— Ուրեմն, եթէ պարսիկները զէպի մեզ եւ զէպի մեր ազատագրութեան գործը այնքան համակրութեամբ են վերաբերվում, ի՞նչու մեր մէջ ձիգեր չի լինում բանակցութիւններ սկսել պարսից կառավարութեան հետ եւ օրոջ համաձայնութիւններ կայացնել . միջամտեց Վահէին :

Մեր դիւանագէտները, մեր հարուստները միայն բերպական պետութիւններից են սպասում ամեն ինչ : Ինչու բարձր թող անել սահմանակից մի բարեկամ երկիր, ի՞նչու ամեն զոհողութիւն եւ ճիգեր չը թափել պարսից կառավարութեան վստահութիւնը եւ պարսից ժողովրդի համակրութիւնը աւելի լայնօրէն գրաւելու համար : Ի՞նչու պարսիկներն լեզուով մի թերթ չենք հիմնում . թէ ժողովրդին և թէ կառավարութեան ապագայից անհոգ, պարզելու համար ազատ Հայաստանի գոյութեան օգուտը ապագայ Պարսկաստանի համար : Եւ ընդպիսիների մէջ քարոզելով, մենք միմիայն նրանց միջամտութիւնն ենք սղերբում . Պարսկաստանի մէջ քալուելով, պարսից կառավարութեան եւ ժողովրդի համակրութիւնը եւ վստահութիւնը գրաւելով մենք մեզ համար ամենամտախի, ամենանպատակաւ յայտար վայրն ենք ստեղծելու մեր

կան . անոնք ոչ մէկ կուսակցութեան կը պատկանին . կամ արտաքուստ են կուսակցութիւններէ կամ արհամարուած . այդ տեսակներուն միացած են նաեւ թրքացած հայ խմբագիրներ , կեղծ մտերակ շինող սուտ ճգնաւորներ , և ամեն աղտոտ թիբեր , ինչ որ կրնայ թրքական սովորութիւնը արտայայտել : Այդ բարոյապէս ինկածներուն ճանկերուն մէջ կ'ուն նաեւ միամիտ հայաստանցիներ :

Ատոնց միացիր , զոնորութիւն մը չը պիտի ընես . գրպանէդ ստակ մը չը պիտի ծախսես . շարունակ պիտի խաբես . անոնց ստակով պիտի ձամբոյդես , ամեն քաղաքէ թրքացած խմբագիրն թերթին մէջ նամակներ պիտի հրատարակես — որ սրիկաներու , կեղծարարներու , աղտոտներու միութիւնը որ աւուր կը յառաջադիմէ . որ կովկասի , Ամերիկայի , եգիպտոսի ամեն հայ հարուստները միացած են ձեզի , Հայաստանը փրկելու համար : Այդ որ երթաս , կարմիր մեյլանով անստորագիր նամակ մը պիտի գրես ձեզի հակառակողներուն , սպառնա՞ նալով որ եթէ ձեզի հակառակին , պիտի սպաննէք զիրենք :

— Բայց զո՞վ պիտի միացնենք , ստոր մասին բան մը չես ըսեր : Արդէն յեղափոխականները իրենք կաշխատին այդ ուղղութեամբ բան մը ընել , իսկ եթէ անոնք չը կրնան , մենք ինչ պէս պիտի կարենանք :

— Աղ զու գործը չէ . բաւական է որ դուն միութենական ես , այն անունը կը կրես վրայ , որ ազէտ ամբիւնի համար շատ հրապուրիչ է :

Անունը միացնող պիտի ըլլայ , իսկ գործունէութիւնը՝ քանդող , դրամ շորթող , կեղծարարութիւն . վերջապէս ամեն մէկ ազատութիւն ինչ որ կրնայ բնէր արդարացի կերպով մահուան դատաւարութեամբ խորհրդի մը , խաբեբայ մը , դաւաճան մը :

Ազատէր պիտի յորջորջես ինքզինքդ . բայց կրնաս թուրք լրտեսի մը հետ ընկեր ըլլալ . կրնաս թուրք անուն առած թուրքերու դատը պաշտպանել :

— Բայց ի՞նչ կրես , եղբայր , միթէ մեր ժողովուրդը այնչափ ազէտ ու պարզ է որ այդչափ վրան բաց կեղծիքը չը հասկնայ :

— Ոչ , ժողովուրդը պիտի հասկնայ ,

իսկոյն ալ հասկցողներ պիտի գտնուին . բայց խաբուողներ ալ պիտի գտնուին և անոնցմէ շորթածը կը բաւէ ձեզի :

— Էն աղէկ . համաձայն եմ . ատոնց մէ մին ցուցուր ինծի :

— Յուցնել չիմ կրնար , որովհետեւ ատոնք անունով մէջ տեղ չեն ելլար . միայն հասցէ տուած են — որ իրենց հետ գործ ընել ուզողը նամակով գիմէ : Հասցնէ աս է .

Դանուպ Գետի ափ , պարոն Գ. Էմին (Բաթ Ռէսթանթ) ,

17 .

ԲԱՅ ՆԱՍԱԿ

ՊԻՐԱՆՈՒՆՔԻ ԽՄԲԱԳՐԻՆ

13 դեկտ. 1901ին ձեր թերթին վերջին թիւերը ծրարելով , մենք բաժանորդներու՝ Պողոս Հ. Պոյաճեան , Ալիքսան Մանուկեան , Ալիքն Խաչիկեան , Լեւոն Խորոսեան , Սարգիս Աճէմեան , Վահան Աւետիսեան և Խորոս հճ. Ստեփանեան , մեր բուն իսկական ստորագրութիւններով նամակ մը ուղարկած ենք ձեզ . յայտարարելով թէ՛ այլ եւս կը դադարեցնենք մեր բաժանորդագրութիւնը ազգային հերոսներու յիշատակը յարգել չը գիտնալնույ . համար ձեզի բարոյական դաս մը տալու նպատակաւ :

Հակառակ մեր այս յայտարարութեան , դուք այլ և այլ պատասխաններով և ուղղագրութիւններով ջանացիք այդպիսի մի գրութեան գոյութիւնը չունենալ ձեռացնել և շարունակեցիք և դեռ կը շարունակէք ձեր թերթի առաջումը : Արդ ներկայիս անգամ մը եւս հրապարակաւ կը յայտարարենք թէ ոչնչք ուզեր ստանալ ձեր անպիտ թերթը :

Ա. Մանուկեան
Պողոս Հ. Պոյաճեան
5 փետրուար 1902
Շումլա

Շումլա 5 փետրուար 1902

Ձեր թերթին 9րդ թիւին մէջ կը կարդանք թէ՛ Շումլայէ տացուած 3 նամակներէն կը տեղականաբ իւր թէ մենք տեղւոյն ազգային գործերու մէջ խոսովութիւն յարուցանող 2-3 դաշնակցականներ արտաքուստ ենք տեղւոյն ընթերցարանի վարչութիւնէն իբրեւ խառնակիչներ :

2. Թէ մենք գրպանով ըլլալով ընթերցարանի սեղանի վրայէն Պիրաուսեանի մէկ թիւը , վրան «մերժուած» գրելով ետ ղրկած ըլլանք :

(*) Այդ ընող անձը այժմ նոյն ընթերցարանի վարչութեան անդամներէն մին է , թէեւ իր ըրածը գէշ արարք մը չէ :

3 Ի՞նչ այժմ ընթերցարանի վարչութիւնը պաշտօնապէս ձեզի ցաւ յայտնած է , մեր կողմանէ եղած այդ խարդախութեան համար :

Ուստի եթէ Հայկական ընթերցարանի վարչութիւնը պաշտօնապէս չը հատուտէ վերադարձաւ 3 կէտերը , մենք , Պետոս պուրկարացի՞ ընթերցարանի վարչութեան անդամներու , այդ վերոյիշեալ 3 նամակներու հեղինակներուն և ձեր ճակատին կը զըրոշմենք «վ տ» պրպարտիչ և «անմոթ ստախոս» մակդիրները :

«Պետոս Պուրկարացի»
Ընթերցարանի վարչութիւն

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Պատիւ ունինք ծանուցանելու քաղաքիս պատարժան սղգայնոց թէ յառաջիկայ շորթարթի երկու , 13 փետրուար 1902 , դիմեկաւոր և անդիմակ շքեղ պարահանդէս մը պիտի տրուի «Սանթրալի» սրահին մէջ ինչ պատ տեղւոյս Ազգ. երկսեռ վարժարանաց :

Կարգագիր մասնախումբս որ ջանք չէ խնայած ազգային այս երեկոյթը փայլուն , կանոնաւոր և վայելուչ ընելու համար , լիստոյն է թէ պատարժան սղգայինք ոչ միայն չի պիտի զլանան իրենց լուսնային և պիտի բարեհաճին ընտանեօր ներկայ դունիլ աւելցնելու համար հանդէսին փայլուն ազգային արժանապատուութեան մասին ունեցած նախանձախնդրութեան սղգայնոցը տալու նա մանաւանդ յայտ օտարին որմէ բազմաթիւ կարեւոր անձնաւորութիւններ այժմէն փափաք կը յայտնեն ներկայ դունուիլ և յաջողութեան մասնակցիլ :

Մտից տոմսակի գինն է 5 Ֆր . իսկ օթեակները արամագրելի են ամեն անոնց համար որոնք կ'փափաքին հատ մը ունենալ այդ երեկոյ և որոնց գիներն են մեծ օթեակը 12 Ֆրանք , կողմակի գոյգ օթեակներուն իւրաքանչիւրը 8ական և ծայրի երկուքը 6ական Ֆրանք :

Օթեակները կը ծախուին մասնախումբին կողմանէ որ պարահանդէսին երեկոյին կանոնաւոր արահը պիտի գտնուի :

ԿԱՐԳԱԳԻՐ ՄԱՍՆԱԽՈՒՄԲ
Վառնա 8 փետրուար
(Կնիք)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Որ քախտի ամբ կիմայնենք թէ՛ Շումլայի Հայ. Յեղ. Գաշ. նակցութեան կողմէն ամառյա 2ին բացած է խիստ շքեղ պիտի պար մասնաւոր ընթերցարանով «ՊեՏՈ ՊՈՒԼԿԱՐԱՅԻ» անունով . անմահացնելու համար այդ անման հերոսի յիշատակը :

Յաջողութիւն և յարատեւութիւն կը մաղթենք այդ հոռանդուն և հասարակային գործերուն ստատուղ երիտասարդներուն :

— Վերակազմակերպութեան , անոր կեանքին խմբագրութիւնը կը յայտարարէ , որ թերթը կարճատեւ զազար մը պիտի ունենայ , մինչեւ որ քանի մը խնդիրներ կազադուին :

— Բարիչէն Վառն Ետպուհ քահանայ Քիպարեան 600 Ֆր . զըրկեր է Պատրիարքարանի ինպատկար յոյս կաճած լոց :

— Կովկասի Շումլայի քաղաքը մեծ ֆեստիւլ կը կրէ մեծ երկրաշարժէ մը . Հոն բաւական Հայեր կը բնակին :

— Վահրամ Եպիսկոպոս Մանուկունի իր Գատր գիւղը գտնուած 500 օսկինոց տունը Ազգ. Հիւանդանոցին կտակեր է , մէկ պայմանով որ մինչեւ մահը ինք ստանայ տան տարիկան վարձքը :

— Աւրաթ իր իւրեւն . յունվար 15 կարնոյ մէջ երկրաշարժի նոր ցնցում տեղի ունեցեր է :

— Յունվար 14ին Հաճնի մայր եկեղեցիէն գոյցեր են քանի մը արծաթ խաչ , եկեղեցական թղթեպտեր և գունձանակներու մէջ գտնուած դրամներ :

— Պոլսոյ Ազգային Խումբ ժողովը իր վերջին նիստին մէջ քննելով Երէջտեան Եպիսկոպոսի կիլիկիոյ կաթողիկոսութեան հրաժարելու խնդիրը , և համալուրով որ Երէջտեանի հրաժարական անդառնուի է , որոշեր է ձեռնարկել հարկ եղած օրինական ձեւակերպութեանց :

— Ուլիխայի Գաշ. Տարոն խումբը 326 Ֆրանք հանգանակեր է , ինպատ Գաշնակցութեան : Կը շնորհարարենք նախանձեղները և մասնակցողները :

Կրտսի թէ հանգանակութիւնը դեռ կը շարունակուի :

Այնօրը երբ մեր ժողովուրդը ըմբռնէ թէ յեղափոխութեան գործ մեզի համար չիք փրկութիւն , մեր սղատագրութեան գործը շատ պիտի պիւրիւնայ :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յ Ո Ւ Ր Ք Ի Ա

Այս ամիս կընէ որ Պօլսոյ յու- նաց պատրիարքը Յովակիմ ընտ- րուած է . բայց ֆիրմանը տա- կալին տրուած չէ : Դուռը կուզէ սեպտեմբեր ամիսը իրաւունքները ու չը կրնար տակաւին որոշում մը տալ . կը վախնայ որ պէջ հե- տեւանք կուեննայ ու նոր խնդիր կը ծագի :

Յոյները բաւական յուզման մէջ են .

— Տամատ Մահմուտ փոշային պայտը . հարէմը . ամառանոց- ները մօտերս դատական իշխա- նութեան ձեռքով պիտի ծախուին :

Փշայի կարծեցեալ մեղսա- կիցները . թուով 47 հոգի աք- սորուած են Թարապուզ և Արա- բիա :

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Իշխանը արտասահման մեկնած է :

— Կառավարութեան Սլովէնի մէջ ունեցած չուխայի ֆապրի- քան կիտով շափ աչրած մոխիր գարձած է . գործին մէջ թշնա- մութիւն կայ կըսուի :

Վնասը կը հաշուի 50—60 հա- շար լէվ :

— Մարգայի խնդրին պատճա- ռաւ ձերբակալուածներէն հրէայ մը և պուլխար մը 5000ական լէվ երաշխաւորութեան ներքեւ ա- զատ թողուեր են . միւս ձերբա- կալուածներն ալ ուզեր են նոյն- պէս ազատ թողուիլ . սակայն դա- տարանը տակաւին չէ տուած իր որոշումը դոցա մասին :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Շամախի քաղաքը սաստիկ երկրաշարժէ մը զրեթէ կործա- նած է . փլած են 4000 տուն . մեռած են 2000 հոգի . բոլոր ժո- ղովուրդը բացօդի մէջ մնացած է :

Պագուէն զրկուած է վաշտ մը զօրք պաշտպանութեան համար :

— Կառավարութիւնը արգիլած է լրագիրներուն Թօլոթօյի մասին բան մը գրեն քանի որ ողջ է տակաւին . մեռնելէն յետոյ պի- տի կրնան գրել :

Ա Ն Գ Լ Յ Ի Ա

Լօնտրայի բարձր վաճառակա- նութիւնը մտադիր էր ճարտա- կան գեասպանին պատուասիրել :

Քանի մը թերթեր դաշնակ- ցութիւնը կը քննադատեն և Անգլիոյ համար աննպաստ կը գտնեն :

Ք Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Անգլիացիները որ ամեն ճիգ թափեր են պօէր մէնէրալ Տուէ- տը գերի բռնելու . նորէն չի յա- ջողեցան . Տուէթ թէեւ շատ վը- տանգաւոր կայութեան մէջ կը գտնուէր . բայց կրկին յաջողե- ցաւ խուսափիլ :

— Տուէթի կիներ անգլիական թերթի մը թղթակցին յայտնած է որ ինք . աւելի կը փափաքի իր ամուսինը մեռած տեսնել . քան թէ անձնատուր եղած . յայ- տարարեր է նաեւ որ Անգլիացի- ները զուր կը յուսան թէ Տուէթ անձնատուր պիտի ըլլայ : Կան- գաւոր է որ իրեն թոյլ չեն տար ամուսնուն հետ նամակագրութիւն պահպանել . չեն թողուր որ քա- ղաքի մէջ ապրի :

— Լահէի մէջ հիմնուած Պօէ- րական միութիւնը Երոպացի բո- լոր նկարիչներուն և քանդակա- զործներուն գիւմած է իրենց գոր- ծերէն մէկ մէկ նուէր զրկել ի նպաստ Պօէրներու վիճակախաղ մը սարքելու համար : Ամենքն ալ համաձայնած են զրկել . 500 նուէր արգէն զրկուած է . իսկ հազար ալ խոստացուած է : Այդ մեծ յա- ջողութեան համար Միութիւնը որոշած է մասնակի ցուցահան դէսներ սարքել Բարիլի . ժընէ- վի . Լահէի . Պուտարէշթի մէջ . մեծ արուեստագէտներու հսկո- ղութեան տակ :

Ա Ի Ս Տ Ր Ի Ա

Ամսոյս չորսին Թրիէսթի մէջ խռովութիւնները վերասկսեցր են . ու վերջացեր են արիւնյեղու- թեամբ :

Յորեկին քանի մը սեւ դրօշակ- ներ երեւցեր են . ամբողջ պա- հաններ է որ այդ տեսակ դրօ- շակներ ամէն տեղ բարձրացուին . կոտորել են բոլոր լուսամուտները ուր այդ դրօշակները չը կան ե- ղեր :

Ոստիկանութիւնը պատերուն յայտարարութիւններ փակցու- ցեր է . որով ժողովուրդը խա- ղաղութեան կը հրաւիրէ և խա- տութեամբ պէնք կրելը կարգիլէ . Բազմաթիւ ձերբակալութիւն- ներ տեղի ունեցեր են :

— Թրիէսթի մէջ մօտ հարիւր մարդիկ ձերբակալուեր են . պա- շարման վիճակը արգէն յայտա- րարած են աւանց միջադէպի մը :

Տպարաններու մէջ աշխատու- թիւնները արգէն սկսուած են . շուտով աշխատութիւնը պիտի սկսուի Լոյտի զինարանին և ար- հեստանոցներուն մէջ :

— Թրիէսթի խռովութիւնները անիշխանականներու կը վերա- գրուին . Քանի մը ժամանակէ ի վեր Թրանսիլվանիոյ մէջ անիշ- խանական գործողութիւններ կը

նկատուին . նոյնպէս և Կալիցիոյ մէջ :

Երկու մարդասպանութիւններ կատարուեր են . և ոստիկանու- թիւնը յանցաւորները չեն գտեր :

Ոստիկանապետ մը խորհրդա- տուր կերպով սպանուած է նիլա- կով մը . փոխ գնդապետ մը փո- խոցին մէջ գնդակահար ըրեր են և չէ հասկցուէր գնդակի ուսկէ գալը :



Ֆ Ր Ա Ն Ս Ա

Թուլօնի մէջ փոխ Ամիրալ Պա- ըէրի նախագահութեամբ կիներ- ըր մեծ ժողով մը կազմեր և հիմներ են «Կանանց Միութեան» մասնաճիւղ մը . ապագայ ընտ- րութիւններու առիթի կանանց ընտրողական իրաւունքը պաշա- պանելու համար :

Պարէր յայտարարած է որ ա- զատասէր կիները իրենց գործը առաջ տանելու համար արգէն 20,000 ֆրանք դրամագումար ու- նին :

— Ֆրանսական կառավարու- թիւնը յաջողեր է Սուլթանէն արտօնութիւն ստանալ Իսկիւպի մէջ հիւպատոսութիւն մը հաս- տատելու . նոր հիւպատոսը ար- գէն գացած է իր պաշտօնատե- ղին :

— Բարիլէն կը հաղորդեն որ Բալուչայի վայրիներէն «Բաթ- րի» թերթին կողմէ գիտնական նպատակով զրկած ճամբորդնե- րու խմբին բոլոր անդամները բռնած և կերած են . մօտ 25 հոգի . որոնց մէջ կը գտնուի և Բարիլի պնտակահաններէն :

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Գերմանական թերթերը կը հաղորդեն որ քանի մը օր առաջ Պերլինի լեհ ուսանողական ընկե- րութիւնը կը քրօսնուր գարեջրա- տան մը մէջ . երեկոյեան ժամը 11ին ոստիկանապետ մը ոստի- կաններով կը մտնեն գարեջրա- տան . ուսանողները կը խուլար- կեն . թէեւ կասկածելի թուղթեր չեն գտնուիր . բայց կրկին կը ձերբակալեն : Նոյն գիշերը ուրիշ մասնաւոր տան մը մէջ 14 լեհ ուսանողներ եւս կը ձերբակա- լուին :

Ս Պ Ա Ն Ի Ա

Խռովութիւնները Սպանիոյ մէջ պարբերական կերպարանք ընդունած են . իռովարարները մեծ մասամբ գործաւորները են :

— Բարսիլօնի մէջ մեծ իրա- բանցում կայ . համալսարանը և զպրոցները դոցուած են . Գոր- ծաւորական ընկերութեան մը

կառավարիչը ձերբակալուած է . գրգռումն : Ը կը սաստկանան Սա- պատէլի Մօնացօի և Թարէզայի մէջ . պատուհաններէն հրա- ղէն պարպեր են զօրքերուն վը- րայ :

Սէն Մարթէնի մէջ ապստամ- բական պատնէշներ շինած են . զօրքը միջամտել է պաղ զէնքով և շատ գործաւորներ վերաւորած է : Պատալօնի մէջ ամբողջ ուզէր ձիաքարը գծէն հանել : Հեծե- լագրքը միջամտել է . շատ զի- րաւորալներ կան : Ձերբակալու- թիւնները կը շարունակուին :

— Բարսիլօնիայի մէջ գործա- տրները և գործատէրերը վէ- ճին զլիւսաւոր պատճառներուն մասին համաձայնութեան եկած են :

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Բէքիւնէն և Երոպական թերթե- րու կը հաղորդեն թէ կայսեր- կան հրամանով համալսարանէն արձակուած են բոլոր Երոպացի բրոֆէսէօրները :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ֆիլիպէի «Հայկական երգեցիկ խումբը» առ շրջանին մէջ վերս- կսած ըլլալով արգէն իր պա- րտավունքները . ձեռնարկած է նաեւ պարբերաբար հրատարա- կելու Երոպական ձայնագրու- թեամբ հայկական հին եւ նոր քառաձայն երգեր . մաքուր թղ- թի վրայ . յստակ վրձնադիր :

Այդ առիթի երգեցիկ խումբի վարչութիւնը նարկայիւս կը յայտ- նէ Պուլկարիոյ և արտասահմանի երաժշտասէր հայ երիտասարդու- թեան . որ եթէ առ երգերէն փափագողներ կան . հաճին դի- մել վարը նշանակուած հասցէին՝ վճարելով ոճէկ թուղթին» հա- մար 20 սանթիմ . փոստի ծախսը մեր վրայ . կան երգեր որոնք մէկէ աւելի թուղթերէ կը բաղ- կանան :

Արտասահմանի համար 35 սնթ . Ֆիլիպէ վարչ . «Հայկ. երգե- ցիկ խումբի» :

Հասցէ՝ Agop Sivadjian Philippople

L'EUROPEEN

Շարաթաթերթ քաղաքական . մի- շաղգային իրաւունքի . ընկերական հարցերու . գրական եւ գեղարուես- տական :

Տարեկան 15 ֆր . Վեցամսեայ 8 ֆր . Հասցէ . 24 rue Dauphine Paris VI

Отговорникъ :

Мурадъ-Ераносянъ Печ. Взаимность — Ва рна